Սամտրեդ, Վայխուն, Ծամշուլղա, Բէլըի Կըլիւչ, Ծուլավեր եւն. յանձնուած էին վրաց զօրամասերի եւ «Կարմիր գւարդիա» կոչուած բաշիբոզուկների կամայականութիւններին: Կազմակերպուած բռնագրաւումը, աւազակային թալանը, ծեծը, բռնութիւնը, բանտարկութիւնը եւ կանանց բռնաբարութիւնը համատարած երեւոյթներ էին այդ գիւղերում: Գազանացած եւ գինարբու սրիկաների լրբութիւնները հասան մինչեւ որբանոցները, մինչեւ 10-12 *տարեկան, դեռատի աղջիկները (Բէլըի Կլիւչ)...*

Այս ամէնի մասին այնքան շատ է գրըուած ժամանակին մամուլի էջերում, որ մենք հարկ չենք տեսնում մտնել մանրամասնութիւնների մէջ: Մեր նպատակն է վեր հանել միայն, որ վիրահայ փոքրամասնութեան դէմ սկսուած հալածանքները շարունակւում էին նաեւ հայ-վրացական զինադադարից յետոյ, երբ այդ հալածանքները ոեւէ «պատերազմական անհրաժեշտութեամբ» արդարացնել չէր կարելի:

* * *

Թէ այս անօրինակ — հայ վրացական աւանդական յարաբերութիւնների տեսակէտից գոնէ անօրինակ — հալածանքներն ու ճնշումները ի՞նչ դառն զգացմունքներ ու խոհեր պէտք է առաջ բերէին հանդէպ մի կառավարութեան, որի երեք խօսքից մէկն անպատճառ ընկերվարութիւնն *է եղել միշտ, միւսը* ժողովրդավարութիւնը, *իսկ երրորդը* ազգերի համերաշխութիւնը՝ *այդ մասին մենք ունինք երկու պերճախօս վկայութիւն, երկուսն էլ հայկական շրջանակների հետ կապ չունեցող:*

Սրանցից առաջինը Սոցիալիստ-Յեղափոխականների կուսակցութեան անդրկովկասեան օրգանն է՝ «Նաշէ Զնամիա», *որ* 1919 *թ. Յունուար* 9*-ի համարում, Ժորդանիայի կառավարութեան հասցէին ուղղուած գրութեան մէջ, այսպէս է արտայայտւում Յունուար* 5*-ի դէպքերի առթիւ.—*

«Առաւօտից սկսած, ժողովրդաշատ գըլխաւոր կենդրոններում, շուկաներում եւ քառուղիների առաջ, հանրային հրապարակներում, Քուռ կամուրջների վրայ, ամենուրեք, զինուորներն ու միլիցիոներները կատարում էին զանգուածային ձերբակալութիւններ հայազգի քաղաքացիների մէջ: Ձերբակալում էին, ինչպէս հայ-վրացական պատերազմի առաջին օրերին, ծերերին եւ երիտասարդներին, բանուորներին եւ բուրժուաներին, արհեստաւորներին եւ առեւտրականներին: Ձերբակալուածների մէջ կարելի էր տեսնել փաստաբաններ, բժիշկներ, ճարտարապետներ, Սոցիալ-Դեմոկրատիայի եւ Սոցիալիստ-Յեղափոխականների կուսակցութեան ականաւոր անդամներ, այլ հոսանքների պատկանողներ, դպրոցականներ, գիմնազիստներ եւ մինչեւ անգամ ժողովրդական ուսումնարանների սաներ: Բացի սրանից՝ եռանդի եկած միլիցիոներները արշաւներ էին կատարում հայերի տների վրայ եւ դուրս քաշելով տանում արական սեռի գրեթէ բոլոր հայերին:

«Առանց չափազանցութեան կարելի է ասել, որ Թիֆլիսի վարչական իշխանութիւնը եւ վրաց կառավարութիւնը բռնուել էին իւրայատուկ սադիզմով: *Այս ամէնը կատարւում էր մի տեսակ յափշտակութեամբ եւ ոգեւորութեամբ... Եւ ոչ մի տեղից չէր լսւում «սա խայտառակութիւն է» խօսքը:*

«Սա խայտառակութիւն *է սոցիալիստներից կազմուած մի կառավարութեան համար, որ իր շարքերում ունի անհատի ազատութեան եւ անձեռնմխելիութեան համար պայքարած վաստակաւոր մարդիկ...* Խայտառակութիւն է *այսպէս ընդառաջ գնալ կենդանաբական ազգայնականութեան պահանջներին եւ այդ ազգայնականութիւնը սնուցանել ու պատսպարել ժողովրդավարութեան եւ սոցիալիզմի դրօշակի տակ:* Խայտառակութիւն է, *որ օգտագործելով Վրաստանի եւ Հայաստանի միջեւ ծագած զինուորական բարդութիւնը՝ հաշիւներ են մաքրում* մի ամբողջ ազգի *հետ եւ այդպիսով է՛լ աւելի սրում ազգային հակամարտութիւնները, է՛լ աւելի հրահրում վրէժի գձուձ եւ գռեհիկ բնազդները:*

«Դուք միացնում էք գաղափարի վսեմութիւնը գործերի ստորութեան հետ: Դուք աւելի վատ էք վարւում քան Գոլիցինը, Նակաշիձէն եւ Տիմաշովը:

«Եթէ ամէն տեսակի հին ռէժիմները՝ յենուելով մեծ մասամբ հասարակութեան